Արձանագրություն N 4
ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ հրատապ բաց մրցույթով դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» «Հուլիսի» 2018թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Հ.Հարությունյան
	Ա.Մուրադյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Մնացականյան

1. **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից պարզաբանում ստանալու վերաբերյալ**

(Մ.Մխիթարյան)

Ի գիտություն ընդունել, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից պարզաբանման հարցում է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն, առ այն մասին, թե մասնակիցը իրավունք ունի ներկայացնելու մեկից ավելի ապրանքային նշաններ: ՀՀ ֆինանսների նախարարությունը հարցմանը 26.07.18թ. տվել է պարզաբանում, ըստ որի, համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների, հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով, ինչպես նաև հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Կից ներկայացվում է ՀՀ առողջապահության և ֆինանսների նախարարությունների գրությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. **Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին**

(Մ.Մխիթարյան)

Առաջնորդվելով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հարցման պատասխանը ստացվել է 18.07.18թ.

Որոշվեց «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Կազմակերպության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել է 18.07.18թ:

Որոշվեց «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառության» որակավորման չափանիշը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված հայտը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

✓ Որոշվեց «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին՝ 275.448.000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

✓ Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, որոշվեց «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ՝ սահմանել 2018 թվականի հուլիսի 28-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 6-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ. Մխիթարյան

Անդամներ՝ _____ Հ. Հարությունյան

_____ Ա. Մուրադյան

Քարտուղար՝ _____ Հ. Մնացականյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

20.07.18, N ԱՄՊ/06.3/9778-18

Ձեր N _____

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար

Առողջապահական կազմակերպությունների կողմից էլեկտրոնային առողջապահության տեղեկատվական միասնական համակարգին անխափան միացման ապահովման նպատակով, Առողջապահության նախարարությունը իրականացրել թվով 2300 հատ «դյուրակիր համակարգիչների» «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34» ծածկագրով գնման ընթացակարգ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան: Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվել է ներկայացնելու որակավորման փաստաթղթերը, այդ թվում նաև առաջարկվող ապրանքի նկարագիրը: Արդյունքում, մասնակիցը ներկայացրել է իր կողմից առաջարկվող թվով 2 ապրանքային նշաններ և մեկ տեխնիկական բնութագիր /հրավերով սահմանված բնութագիրը/: Վերջինս պարզաբանել է, քանի որ պահանջվող քանակը մեծ է և այդ չափով պատրաստի արտադրանք առկա չէ, ուստի ներկայացվել է հրավերով սահմանված պահանջները և պատրաստ է մատակարարելու սահմանված նվազագույն պահանջներին բավարարող ապրանքներ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ վերոնշյալ խնդիրներին առընչվող պահանջներ սահմանված չեն, խնդրում եմ պարզաբանել «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կարող է բավարար գնահատել մասնակիցի կողմից ներկայացված բնութագիրը /կցվում է/:

Միաժամանակ խնդրում եմ պարզաբանել նաև, արդյոք պատվիրատուների կողմից համակարգչային տեխնիկայի ձեռքբերման դեպքում «Արտադրողի կողմից տրված երաշխիք, որը սպասարկվում է տվյալ տարածաշրջանում արտադրողի կողմից արտոնագրված պաշտոնական սերվիս կենտրոններում» պահանջը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող Համիկ Մնացականյան
ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական բաժին
հեռ. (060) 80-03-03/1703

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ minister@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 002, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01/27-1/13544-18
26.07.18

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Ի պատասխան 20/07/2018թ.
թիվ ԱԹ/06.3/9778-18 գրության

Հարգելի պարոն Թորոսյան

Ուսումնասիրելով վերոնշյալ գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված պահանջներով: Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Վերոգրյալով պայմանավորված՝ հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ինչ վերաբերում է պատվիրատուի կողմից համակարգչային տեխնիկայի ձեռքբերման դեպքում հրավերով՝ «Արտադրողի կողմից տրված երաշխիք, որը սպասարկվում է տվյալ տարածաշրջանում արտադրողի կողմից արտոնագրված պաշտոնական սերվիս կենտրոններում» պահանջի սահմանմանը, ապա գտնում ենք, որ վերջինս կսահմանափակի մրցակցությունը և կհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ գնման գործընթացի մրցակցային, ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատ. Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258